

1035 1039 1051 1055 1058



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՐ 18

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՏՐԱԿԱՆ

ՔՐԵՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՐՈՆԻԱ ՇԱԲԱԹ 10 ՅՈՒՆԻՈՒՆ 1876 ԹԻԻ 1031

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բարձրագոյն Դուռն մարդասիրական խնամք
Եւ զործունէութեամբ կաշխատի ամենայն
... ի գործ զնել թէ ի Կ. Պօլս և
... ի գաւառս զնոր բարեկարգութիւնս ըզ-
... կայսերական վերջին հրովարտական :
... հրովարտական պատճենն՝ Եւրոպայի տէրու-
... անց պաշտօնական կերպիւ հաղորդելու առ-
... Բարձրագոյն Դուռն արժան համարեցաւ
... բարեկարգական ծանուցագիր մի ևս յուղարկել
... կայսերական կառավարութիւնն ի մէջ
... իրատ իրաւամբ կրնէ թէ «Եւրոպայի աշ-
... րայոց տախտակին վերայ միայն օսմանեան
... թիւնն չէ, որոյ վարչութիւնն նոր բարե-
... արգութեանց հարկաւորութիւն ունենայ, և
... անկախութեան երազներով խմորեալ երկիր-
... իւրենայ, որք իրենց եղեալ շնորհամենեւն
... անկէն զԵւ լինի և ուրիշ բաներ ևս կը
... անկէն : Այսպէս պարագայից մէջ զոր ինչ
... ուրիշ տէրութիւնք, նոյնը կրնէ և օս-
... անեան կառավարութիւնն, այսինքն՝ մէկ կող-
... անց կաշխատի զեղծումներն անհետ ընել և
... կողմանէ ամեն միջոց ի գործ կըդնէ ապրա-
... արգութիւնն զպէլն : Վերջապէս յիշեալ չըր-
... արական ծանուցագիրն յառաջ բերելով թէ
... Բարձրագոյն Դուռն հայրենասէր պաշտօնատէր-
... անց բաղկացեալ յատուկ յանձնախորհուրդ մի
... կողմէն է նոր բարեկարգութեանց գործա-
... արգութեան վերայ ազդու կերպիւ հսկելու հա-
... ւոյ կը յաւելու թէ՛ այս գործադրութիւնն ե-
... րաւորելու համար օտար տէրութեանց մի-
... անութիւնն որոյ վրայօք շատ կըխօսուի,
... ձևով որ և լինի, մահայու հարուած մի կը-
... արուի օգուտաւ : Սակայն վեհապետական
... անցը, նորա կառավարութեան անկախու-
... անն և տէրութեան ամբողջութեանը :
... Սմանեան նոր դեպքան ի փարիզ վսե : Սա-

տրդ փաշան՝ իւր վկայագիրը Գաղղիոյ հասարա-
կապետութեան նախագահին մատուցանելոյ
առթիւ, համառօտ՝ բայց պատուական տոնեա-
լիսութիւն մի ըրաւ որ ի էր մտերմական սի-
րալիր զգացմամբ : Բարձրագոյն նախագա-
հին պատասխանն ևս միևնոյն սիրալիր անկեղծ
զգացմանց յայտարարութիւն մըն էր : Այս եր-
կու գաշնակից կառավարութեանց բարեկամա-
կան անկեղծ յարաբերութիւնքն, որք Գաղղիոյ
վերջին ազէտալի անցքերէն ի վեր գրեթէ ան-
գործ մնացած էին, ոչ սակաւ նշանակութեան
արժանի են ներկայ քաղաքային դժուար պարա-
գայից մէջ : Երաբերութիւնք, որք յոյժ նպաս-
տաւոր կըհամարուին Բարձրագոյն Դուռն օգուտի-
ցը համար : Մեր այս ըսածը կըհաստատուի Լոն-
տոնի Թագաւոր ֆարիզէն Յունուարի 4 ըստ
նոր տուժարի՝ գրուած հետեւեալ տողերէն :
«Հաւատարիմ աղբիւրներէ կիմանամք թէ Գաղ-
ղիոյ կառավարութիւնն իւր փափաքն չայտնե-
րէ Անգղիոյ դահլիճն համամտութեամբ վարուիլ
նորա հետ ի մասին ծրագրին Անտրասի կոմիտի
վան Արեւելեան գործոց» :
Յիշեալ գլխաւոր օրագիրն իւր կողմանէ այս-
պէս կը յաւելու :
«Թէև գաղղիական աշխարհավարութիւնն ի
զանազան ժամանակս սխալներ բերած է Արեւել-
եան գործոց նկատմամբ, այսու ամենայնիւ Եւ-
րոպայի օգուտը կըպահանջէ որ այս ազդեցու-
թիւնն ի չիք չգառնայ այժմեան ծանր տաճա-
րային մէջ, յորում ուրիշ անգամ չըստուեցան
Թուրքիոյ գաւառներն : Քանզի շատ հին ժամա-
նակէ հետէ Գաղղիան միշտ գլխաւոր գերն խա-
ղայեց է՝ օսմանեան կայսերութեան դպչելու
քաղաքային մեծ դէպքերու մէջ» :
Այս ամեն յառաջ բերուած տողերէն կըտես-
նուի թէ Գաղղիան և Անգղիան մտադիր են ի
նպաստ Թուրքիոյ ազդու կերպիւ դիտողութի-
ւնը ընել ի մասին Աւստրիոյ կառավարութե-

նէն առաջարկեալ ծրագրին, որուն համար փա-
րիզի գաշնագրութեան ստորագրող տէրութեց
հաւանութիւնն պիտի խնդրուի :
Գաւառաց վարչական ժողովոյ և դատական
ատենից անդամոյ ընտրութեան մասին, Բարձ-
րագոյն Դուռն մանրամասն հրահանգ յուղար-
կեալէ գաւառաց ընդհանուր կառավարաց :
Ահաւասիկ յիշեալ հրահանգին գլխաւոր կէ-
տերն, զորս ՄԱՍԻՍԷՆ քաղելով կըհրատարա-
կեմք ի տեղեկութիւն մեր ընթերցողաց :
Ա. Ընտրութեան իրաւունք ունին գիւղերը
բնակողամեն աստիճանի անհատք՝ որ դոնէ 20
տարեկան են և տուրք կըվճարեն : Այս գիւղա-
ցիք իրենց գիւղերէն վտահոլութեան արժանի
ընտրողներ (ինթիխայիսի) պիտի ընտրեն ժողո-
վոյ անդամներն ընտրելու համար :
Բ. Ընտրողք 25 տարեկանէն վար, ոճրագոր-
ծութեամբ մը դատապարտեալ կամ մէկուն դէմ
հարստահարութեամբ վարուած անձինք չպիտի
ըլլան, և անձնական արժանիք պիտի ունենան :
Գ. Ժողովոց անդամ ընտրուելիք անձինք ալ
ընտրողներէն պահանջուած հանգամանքներն
ունենալէ զատ՝ կարգաւ գրել պիտի գիտնան,
և 30 տարեկանէն վար ըլլալու չեն :
Դ. Ամեն Գաղայի մէջ գտնուած գիւղերն ու
թաղերն ընտրական մարմին մը (հէյէթը ինթի-
խայիսի) կըհամարուին, երբոր դոնէ 200 տու-
նէ բաղկանան : Այս Մարմիններուն ամեն մէ-
կէն և Գաղային կեդրոնին թաղերէն երկերկու
ընտրող պիտի ընտրուին, որք Գաղային կեդրո-
նը ժողովուելով, դատական և վարչական (Տա-
վի և Խաթիբի) ժողովոց անդամակցութեան հա-
մար որոշեալ թուոյն կրկնապատիկը պիտի ընտ-
րեն : Միւթէսարէֆն ալ այն ընտրեալ անձանց
կէսը պիտի առնու, և ասոնք պիտի ըլլան դա-
տական և վարչական ժողովոց անդամք :
Ե. Գաղային ընտրական գործողութիւնը կա-
տարուելէ ետե, Գաղային վարչական և դատա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՐԵՑԱՇԵԱԿԱՆ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

(Ի մեծաւ Ռուսիոյն գրագետս)

Յարուակոթիւնն է վերջ : Տեւ 1026—1027 թիւս :

ԲՆԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Միշտ հոս ընդհանուր կերպով ըսվածներէն
կայս գուշակվիլ այս տարեցոյցին ոգին ու ըն-
թացքը : Բայց ի խելամուտութիւն հասարակու-
թեան անօգուտ չենք համարիր անոր գործա-
նական քանի մը մասնաւորութեանց որոշ բա-
նագրութիւնը :
Այսինքն է թէ քրիստոնեայ ժողովրդոց համար՝
խիտաւոր թվականին առջև տի խաւարէին ան-
պաշտ Գործածված մանր ու մուշր մասնա-
ւոր թվականքը, բայց ի բնական և տիեզերական
թվականէն որ մարդոյս ստեղծմանէն կըս-
կէր, որ միշտ կըտիրէ հին պատմութեան մէջ՝
պէտքէն փրիստոսինը կըտիրէ նոր պատմութեան
մէջ : Նախի հայկազանց թվականն ալ կըփոքր-
անայ թէպէտ՝ իբրև մասնաւոր թվական՝ տիե-
զերական թվականին առջև, իսկ իր բնական
միշտ տարեմուտովը կըհամաձայնի անոր, եր-
կունքն ալ դարնամուտէն սկսելով, և մեզի հա-
մար համապատիւ է մեր ազգային պատմու-
թեան և յիշատակարանաց մէջ : Բայց ընդհա-
նուր կերպով չենք կրնար զազգային թվականը

վերագրանել քրիստոսի թվականին, որ զնոր աշ-
խարհը հինէն անընդհատ է ըստ ամենայնի
մարդկային ընկերութեան դէմքն այլակերպե-
լով : Ուստի պէտք էր այս թվականները աստե-
ղական դրութեամբ իրարու համաձայնել ամ-
սաղխոց միաւորութեամբ :
Չայս ըրինք բնական տարեմուտն իր տեղը
պահելով, այսինքն դարնամուտին, և քրիստոսի
թվականին տարեմուտը՝ իբրև շնորհական և
միանգամայն քաղաքական տարեմուտ աստեղա-
կան ամսոց՝ Ծննդեան տօնին ամենամեծ գըտ-
ված աստեղական որոշ կէտին կապեցինք՝ այս-
ինքն ձմեռամուտին (1) որ Լատինաց Ծնունդէն
չորս օր առաջ է : Այս տարեմուտով շնորհական
տարեւոյն ամիսները կատարելապէս կըմիաւորին
բնական կամաստղաբաշխական ամսագլխոց, և
ասով բնական ամիսները քրիստոսի թվականին
մէջ անշիջով կերպով կրնան գործածվիլ առանց
բնական խոչընդոտի : մասնաւոր եթէ սկիզբնե-
րը ընդհանուր գիւրութեան կամ օտարաց ու
անվարժից գիւրքմուտներն ընելու համար, և
տիեզերաց կամ Գունաց ամիսն ալ միանգամայն յիշ-
վի թվաբերութեան մէջ զորօրինակ սապէս՝
1872 Ձի-Դեբի 1 և Դեբի-Դեբի 9 :

(1) Զինքնի մեկը Ս. Ստուածածնայ յղութեան
տօնին պատահելով, որ քրիստոնէութեան տօնից ա-
ռաջինն է, այս օրը միանգամայն եկեղեցական կամ
տօնական տարեմուտ ալ գոցե կրնայ սեպտիլի, երբ
էրբէր կըբեր աստուածաբանական պատմաւ մը ջոն-
քի ուրիշ կերպ մտածելու :

Ասով՝ Լատինացմէ 11 օր առաջ սկսած կըլ-
լանք տարին, ինչպէս Լատինք 12 օր առաջ կը-
սկսին Յունացմէ : Ասի գուցէ նոր չփոթութեան
առիթ մը թըլի ունանց, խորհելով թէ՛ երկու
անհամաձայն թվականաց քով երկրորդ մ'ալ
աւելցաւ իրաւ այնպէս կըլլար եթէ անոնց
գործածած միևնոյն բառերը մենք ալ գործա-
ծէինք, և օրինակի համար՝ երկու Յունվարնե-
րու քով երրորդ Յունվար մ'ալ հանէինք, ի-
րարմէ 1 ջական օր տարբերութեամբ : Իսկ մենք
չըտի ըսենք Յունվարի 1, 12, 24, հապա Յուն-
վարներու մէկը կամ միւսը տի դնենք մեր բնա-
կան ամսոյն հետ ինչպէս վաղուց անտի կընենք
մեր Յայմաւուրաց մէջ, զորօրինակ Արեգի 1
և Մարտի 9, եւ եթէ ուզվի աւելի ճշդել թէ
որ Մարտն է, դժարին չէ Յ. կամ Լ. գլխագիրն
աւելցնել Յունաց կամ Լատինաց նշանակելու համար :
Բնական ամիսները ամէն տոմարի մէջ և ամեն
թվաբերութեան հետ կրնան վարվիլ : Բաւական
է որ տարեմուտը չորս եղանակներէն մէկուն
սկիզբէն սկսած ըլլայ կամ դոնէ աստղաբաշխա-
կան ամսագլխոց մէկէն, բայց բնական տարե-
մուտը՝ այսինքն դարնամուտը ամսոյն գլխէն
չխախտելով : Ինչպէս որ կըվարվին ստեղծման և
չայկազանց թվականին հետ որք դարնամուտէն
կըսկսին :
Ամսոց թվական անուանքը ամենէն աւելի
բնական և բանաւոր անուններն են որ հոգա-
գնախ ամէն կողմի համար կիրաւուրի և ընդու-
նելի ըլլալու յարմարութիւն ունին : Առաջին
մարդիկ ալ սկզբանէ այսպէս կըգործածէին,

կան ժողովոյ անդամներն որք ժողովրդէն ընտ-
րուած ըլլալով անոր ներկայացուցիչները (վե-
քիլ) կը համարուին, Լիվային կեդրոնը պիտի
երթան, Լիվային դատական և վարչական (թէ-
մեիդ և իտարէ) ժողովները կազմելու համար :
Եթէ ամենքն անձամբ երթալ չուզեն, կրնան
իրենց մէջէն այն անձինքը զրկել որոց վրայ
վստահութիւն ունին, բայց ասոնք անպատճառ
մէկ երկու հոգի չպիտի ըլլան : Այսպէս ամեն
Գաղաներէ գալիք ընտրողներն ամբողջացած
ատենին, վարչական և դատական ժողովոյ ան-
դամակցութեան համար որոշեալ թուոյն կը ու-
նայապակը պիտի ընտրեն, առանց կառավար-
չին ազդեցութեանն ու միջամտութեանը : Յե-
տոյ կուսակալն այդ կրկնապատիկ ցանկին մէ-
ջէն կէսը պիտի ընտրէ առնու յիշեալ ժողովոյ
անդամակցութեան համար :

Զ. Լիվայի ժողովոյ համար ընտրեալ անդամք
ալ ընտրեալ արար ժողովրդեան ներկայացուցիչ-
ներն ըլլալով՝ կուսակալութեան կեդրոնը պիտի
երթան, վերաքննիչ ատենին (Տիվանք թէէմիդ)
և վարչական ժողովոյն անդամակցութեան հա-
մար որոշեալ թուոյն կրկնապատիկ պիտի ընտ-
րեն, և այս ընտրական գործողութեան ոչ կու-
սակալն և ոչ ուրիշ որ և է պաշտօնակալ չպիտի
միջամտեն և չպիտի ազդեցութիւն բանեցու-
նեն : Յետոյ կուսակալը նոյն ցանկին կէսը պիտի
ընտրէ ու առնու անդամակցութեան համար, և
այս ընտրութիւնը Բարձրագոյն Դրան կողմէ
պիտի վաւերացուի :

Է. Հարկ չէ որ նահանգի կամ կուսակալու-
թեան կեդրոններուն համար ընտրութիւնք ժո-
ղովականները նոյն կեդրոններուն գլխաւոր բը-
նակիչներէն ըլլան : Նմանապէս Գաղաներէն
ընտրողները կրնան նահանգական կամ գաւա-
ռական ժողովներուն անդամ ըլլալ :

Ը. Դատարանաց և ժողովոյ անդամներուն
թիւը հաւասարապէս կը հաստատուի : Բայց Դա-
տարանի գատական ժողովոյ երեք անդամոց վրայ
մէկ մ'ալ պիտի աւելնայ, և այս անդամոց կէ-
սը մահմէտական և միւս կէսը՝ ոչ-մահմէտական
ըլլալով՝ պիտի ազգաց վրայ պիտի բաժնուի :
Եթէ ժողովրդեան ազգային տարբերութիւնն
երեքէն աւելի ըլլայ, իւրաքանչիւրէն մէկ մէկ
տարի անդամ պիտի առնուի :

ՄԻՐԶԱ ՀԻՄԱՆԻՆ ԽԱՆ

Բարձրա՝ Միւշիւրի Տէօվէ Միրզա Հիւսէին
Խանն, որ Պարսից կառավարութեան արտաքին
գործոց նախարար և ընդհանուր մեծ զօրապետ
է, և միանգամայն Մեծ-Եպարգոսի պաշտօնն

Սրբազան Պատմութեան վկայութիւնը բաւական
է. «Եւ յամենայն Եօթնորորում ցատաւ տապանն ի
լեքինս Արարատայ» «Յամենայն առաջնում որ օր
մի էր ամսոյն, նուագեաց ջութն եւ եբաց Նոյ ըզնե-
ղուն տապանին» :

Զրհեղեղէն զինի, ազգաց ու լեզուաց բաժան-
մանէն ետքը սկսան մարդիկ այլեայլ ենկիւնե-
րու մէջ այլեայլ մասնաւոր անուններ տալ ամ-
սոց : Եղանակաց և բնութեան երևոյթից համե-
մատ՝ ամսոց մշակական անուններ տալու առա-
ջին գաղափարը Հայկայ է : որոյ սերունդը մինչև
ցայսօր պահած է զանի թերեւս յանգէտօ օտա-
րաց, և որոյ համար իրաւամբ պարծելով հին
հեղինակաց մէկը, անոր Աստուածատուր ձրից
մէկը սեպեղով իր տօմարն ալ, կրնէ համարձա-
կապէս Հայկազանց համար՝ թէ Աստուծմէ առին
«Չտօմարն՝ անգլիկա զաւաճաւ Հայկ յառաջ քան զնա» :
Անտարակոյս կը թուի թէ մեր գիւղացն նախա-
հայրը ոչ միայն ճարտար, շարժիչ էր աղեղան,
այլ և թը ոց ու չափոց, և գիտող երկնային
մարմնոց : Առաջինն եղաւ տարեցոյց տալու իր
նորածին աղբիւն, սրբազան տարեմուտը՝ որ
հաստատուն էր՝ գարնամուտէն սկսելով և Ամա-
նոր տօնելով (ինչպէս որ Հրեայք ու Պարսիք ալ
կրնէին իրենց կրօնական կարգաց մէջ) : Իսկ Նա-
ւասարդ տարեգրութիւնը քաղաքական էր և ան-
հաստատ :

Չայս գեղեցիկ գիւտը՝ որ պատիւ կրնէ հեղի-
նակին և արժանի ամենայն պարծանաց անոր

կրկնապատիւ ամենայն արժանաւորութեամբ,
Միրզա Հիւսէին Խանն, կըսեմք, անշուշտ մեր
տկար գրչին պաշտպանութեանն և գովութեան-
ցը կարօտութիւնն չունի : քանզի իւր կենցաղա-
գէտ հազուադէպ տաղանդով և իւր հայրե-
նասիրական գործունեայ խնամքն երևելի հան-
գիստացեալ է բոլոր աշխարհի առջև :

Մեր այս ասացելոց ապացոյց կը համարուին
զանազան օգտակար դաշնագրութիւնքն՝ որք
տեղի ունեցան Նորին Բարձրութեան միջոցաւ
մի քանի տէրութեանց հետ և մասնաւորապէս
Բարձրագոյն Դրան հետ, երբ 'ի Կ. Պօլիս կը-
գանուէր Պարսից մեծ դեսպանի պաշտօնիւ :
Նմանապէս բարձրա՝ Միրզա Հիւսէին Խանն՝ օ-
գոտափառ Շահին յերկրպա ճանապարհորդու-
թեանն առաջնորդ և ուղեկից լինելով՝ յաջողե-
ցաւ Պարսից կառավարութեան՝ Երոպոյ մեծ
տէրութեանց հետ ունեցած բարեկամական
յարաբերութիւնքն մեծապէս զարգայնել :

Յիշեալ ճանապարհորդութիւնն՝ որ յոյժ նը-
շանաւոր դէպք մըն է, զի նորա օրինակն՝ այս-
ինքն Պարսից վեհապետի մը իւր երկրին սահման-
ներէն դուրս ելլելը գրեթէ 4000 տարի յառաջ
պատմութեան մէջ միայն կը տեսնուի, յիշեալ
ճանապարհորդութիւնն, կըսեմք, վեհափառ
Նասրէտօղին Շահին լուսաւոր մտաց և ազգայնէն
վեհ զգացմանց արդիւնքն է, և ոչ սակաւ նը-
պաստաւոր եղև Պարսկաստանի բարոյական և
իմացական յառաջդիմութեանցը : Երբեք
գիտութիւնքն՝ որ Ն. վեհափառութեան մար-
դասիրական հրամանաւ և իւր առաջին նախա-
րար Միրզա Հիւսէին Խանին հայրենասիրական
անխնջ ջանքին 'ի գործ դրուեցան :

Մինչդեռ Նորին Բարձրութեան այս ամեն
մեծագործութիւնքն՝ անժխտելի ապացոյց են
իւր կենցաղագէտ տաղանդին և իւր հայրենա-
սիրական զգացմանցը, մի քանի թերթք Պօլսոյ
համարձակեցան յանցելուն զանազան զրպար-
տութիւնս բարբառելի ընդդէմ Միւշիւրի Տէօվ-
էին : Զրպարտութիւնքն՝ որ չար ոգւով, արդ-
րինաւոր ակնկալութեամբ կամ օտարաց չարա-
նախանձ թելադրութեամբ հրատարակեալ են :
Հետեւաբար ամենեւին հարկ չեմք համարի հեր-
քել զայնոսիկ : քանզի նոյն զրպարտութիւնքն
չառ ցածէն արձակեալ լինելով՝ անկարող են
հասանել մինչև 'ի Նորին Բարձրութիւնն :

Այս առթիւ արժան կը համարուիմք նաև մի
քանի խօսք զրուցել 'ի մասին հաճի Շէյխ Մահ-
սին Խանին, որ Պարսից կառավարութեան այժ-
մեան դեսպանն է 'ի Կ. Պօլիս : Նորին վսեմու-
թիւնն իւր իմաստուն քաղաքականութեամբն

ազդին, Հրեայք Մովսէսի կը վերագրեն և Հայք
Հայկայ՝ հնագոյն քան զՄովսէս : Այս մասին ա-
ւելի ընդարձակ տեղեկութիւն խնդրողները՝ Հ.
Ղևոնդ Ալիշանայ հոգեշնորհ վարդապետին սի-
րահիւս տողերը թող կարդան Յօշիկ հայրենաց
հատորներուն մէջ՝ «Հայկայ չըջան և սկիզբն
մարդկութեան 'ի Հայս»՝ վերնագրով գլուխնե-
րը, որոցմէ շատ լոյս և ոյժ քաղելիք :

Մեր դրած մշակական անուանքն ալ՝ հեռի
կուսապաշտական կամ բռնապետական յիշա-
տակներէ՝ Հայկազանց տօմարին ոգւոյն և իմաս-
տին հետեւելով է : միայն աւելի ճիշտ ու համե-
մատ բերել ուզած ենք բնական երևութիւնքն
և բառերն աւելի ծանօթ, որոց նշանակութիւնն
ինքնին իրենց արմատէն յայտնի է առանց իսկ
մշակական յօդուածոց զոր ամէն մէկուն քով
դրած ենք ի պէտս ինչ հողագործին :

Այս մշակական անուանքը թէպէտ ամէն երկ-
րի լեզուն կրնար յարմարիլ՝ բնութեան երևոյթ-
ներն երկրիս ամէն կողմ՝ միօրինակ չպատահե-
լով, բայց բարեխնամ գօտուոյ տակ գտնուող եր-
կրներու համար՝ ուր ենք խիստ յարմար են :
Ուստի թըւական և մշակական անուններն ի-
րարմէ չզատելով՝ մէկը միւսին իբրև բացայայ-
տիչ երկուքը մէկէն դրինք մեր տարեցոյցին
մէջ որք միօրինակ ու անտարբեր կրնար գոր-
ծած վիճակ միւսին տեղ :

Հին անուանց նկատմամբ՝ պիտի բարեմասնու-
թիւն մ'ալ աւելցնել կարծեցինք նորերուն վը-

և համակրական քաղցր բնաւորութեամբն
Նորեցաւ բարեկամաբար կարգադրել մի քանի
գեղեցիկ խնդիրներ, որք ժամանակէ մը հետեւ
'ի կախ մնայեալ էին և ցաւալի դժտութեանց
պատճառ կրնէին 'ի մէջ Բարձրագոյն Դրան և
Պարսից կառավարութեան : Բաց յայտնա՝ Նո-
րին վսեմութեան խոհական և գործունեայ ջա-
նիւքն զանազան դաշնագրութիւնք հաստա-
տեցան 'ի մէջ այս երկու դրացի տէրութեան
'ի փոխադարձ օգուտ յիշեալ երկու գլխաւոր
ազգաց : որոց քաղաքային համաձայնութիւնն
անշուշտ ակնածութեան հարկ կը դնէ օտար տէ-
րութեանց վերայ :

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ Հայ քաղաքներէն ցաւալի սրտիւն
նամք քէ յիշեալ մայրաքաղաքին ազգային վարչա-
քեան ընթացքն խիստ տխուր վիճակի մը մեջ կ'ըն-
կալուի, զիստորապէս 'ի պատճառս Ղալաթիոյ
կառք խմբակին շահասիրական մեքենայութեան
որք դժբաղդաբար կը շարունակեն անարգել :

Կեդրոնական ազգային գործոց այս վիճակն
շուշտ յոյժ ցաւալի է. քանզի՝ ինչպէս կըսէ Փիլի-
քիան, խիստ տխուր եւ անհաճոյ տպաւորութիւն
մի պիտի ընէ գաւառական ազգային վարչութեան
վերայ, որոց՝ կեդրոնական օրինակ եւ հայելի տը-
տի լինել իւր բարեկարգ ընթացքովն :

Ի տեղեկութիւն Արշալոսոյ հետաւոր ընթերցող
հարկ կը համարուիմք ՄԱՍԻՍ քաղաքն հետեւեալ
յօդուածն յառաջ բերել, որ Կ. Պօլսոյ ազգային
ծոց եւ Ղալաթիոյ խմբակին ամենատխուր բար-
ճիշտ նկարագիրն է :

ԳՍՅՍԱԿՂՈՒԹԻՒՆՔ

Ազդին գործերն իւր կրից և շահուց ծառ-
յեցնող հանրածանօթ խմբակին անդու հա-
ծանաց առարկայ եղող անձերէն մին ալ քա-
րարքական փոխանորդ Տ. Մկրեան հայրն է :
Կերեւի թէ այդ քահանային Պատրիարքարան
մէջ ներկայութիւնն և մանաւանդ Պատրիար-
քական փոխանորդութեան պաշտօն վարելու
խմբակին անդադար երկնած շահաւէտ քա-
խաւարային խորհրդոց խոչընդոտ մ'եղած է :
այս պատճառաւ զայն (զնա) տապալելու և Կա-
րիարքարանէն հեռացնելու ամեն հնարք
գործ կը ընեն : Եւ որովհետեւ հիմա, փառք Պա-
տուծոյ, մեր ազգին՝ մանաւանդ Կ. Պօլսոյ մէջ
ժողովրդեան հոգւոյն փրկութեան հարց
սրբութեան և առաքինութեան տիպար եղող
կրօնի և բարոյականի զգացումը ժողովրդեան

րայ՝ իւրաքանչիւր եղանակին ամսոց յառա-
յանք մը տալով, ըստ կարի նմանաձայն եղան-
կին անուան, որպէսզի մշակը՝ թէ և իմաստ-
ալ ուշադիր չըլլայ, կարենայ յանգէն իմաստ-
ութե այս ինչ ամիսը որ եղանակին մէջն է, քա-
օրինակ ամառ՝ իր ամիսները Հնձար, Տօմար,
Մրդար (կրճատմամբ իբր Հնչարար, Տօմար-
Մրդար), Չմեռ՝ իր ամիսները Չիւներ, Սաւան,
Մրդիւր (իբր Չիւնաբէր, Սաւանաբէր, Մրդիւր-
Գարուն և Աշուն նմանապէս ըլլալով, ասոնք
ամիսները իրարու չփոխելու համար պէտք
իւրաքանչիւրին ամսոց խումբն ալ եղանակ
այլապէս ձայնով յորջորջել : Զարթիւն, Մարտի,
Մարգին (իբր Չարթիւն, Մարտի), Մարտի
Գարնան յատկացեալ կ'ընեն, Թաւմոն, Մարտի
Աշուն յատկացեալ :

Հիներուն վրայ երկրորդ բարեմասնութիւն
մ'ալ զոր խիստ փոքրիկ համարելու չէ, Աշ-
եաց օրերուն հաւասարապէս բաշխումն է
ամսոց վրայ : Այս բաշխումն այնպէս մ'ընեալ
զած ենք որ՝ թէ ամառը լինէր չհեռանալ
կենդանակերպ աստեղատանց կէտերէն, և թէ
մշակը իսկոյն իմանայ անոր թըւական անուան
թէ այս ինչ ամիսը քանի օր կրնայ ունենալ :

Ահաւասիկ այս ամենապարզ գրութիւնը
ամիսին որոյ անունը անգոյգ թըւով կըսուի
անգոյգ թըւով կաւարտի, այսինքն ունի Յոյ
այն ամիսն որոյ անունը զոյգ թըւով կըսուի
զոյգ թըւով կաւարտի և ունի 30 օր, բաց ինչ

մէջ օր քան զօր զարգացնող շրջանիկ վարդապետներն ունինք, որք իրենց վերկարար պաշտօնը կատարելու առիթ և միջոց կը փնտռեն, և այդ միջոցներէն մին ալ Պատրիարքական փոխանորդութիւնն է. պաշտօն մը, զոր վարդապետներն իրենց մենաշնորհ համարած էին կէս դարէ ՚ի վեր(1), բայց խորմեան սրբազան կապտեց իրենց ձեռքէն (խորմեանի անհաշտ թշնամի ըլլալուն պատճառներէն մին ալ այս է). այդ սուրբ հայրերը բնականաբար ազգանուէր խումբակին պատրաստ օժանդակներ կամ գործիներ են, որք անոր հետ ձեռք ձեռքի տուած զիրար կը պաշտպանեն, միմեանց դայթակղական գործերը կը ծածկեն, կարգարարներն ազգին միամիտները որսալու, և իրենց կողմնակիցներ ու արքաներէն շատցնելու, ընտրութեանց մէջ ձայն և քուէ ստանալու, զիրար պաշտօնի հասցնելու, մէկ խօսքով՝ ազգին գործերն իրենց ձեռքն անցունելու համար գիշեր ցերեկ անխնայ կաշխատին, կը բեւեռեն, կը մեքենայեն:

Ինչպէս վերը ըսինք, քանց նուիրական շահերուն արգելքներէն մին ալ Պատրիարքական փոխանորդն ըլլալով, վերջին 3-4 տարուան մէջ դաւ չմնաց՝ որ շնիւթեցին անոր դէմ, չաքախօսութիւն, գրգռողութիւն չմնաց՝ որ չըրին անոր դէմ, բայց ամեն անգամուն ալ իրենք խայտառակեցան: Բայց կերելի թէ քանի կը խայտառակին, այնչափ կատաղութիւններն կաւեցնայ: Վերջին օրերս դարձեալ այդ մարդն տրտաւորեցաւ համար գործիք կընտրեն իրենց՝ երօնական ժողովոյ անդամներէն իրօնեան խորէն վարդապետը, որ թէ և խնայակն մտերիմ, բայց իւր գոյնը չյայտնելով՝ ամեն տեղ կը մտնէ՝ կենէ, խորմեանի բարեկամներուն առջև խորմեանը կը դնէ և Պատրիարք վար կը գտնէ. Պատրիարքին բարեկամներուն առջև Պատրիարքը կը դնէ և խորմեանը կը բամբասէ. մեղի կուգայ խորէն Նաբայէ սրբազանը չարաչար կը պարտաւէ, անդին կերթայ կը գտնէ. ամեն լրագրագետաց բարեկամէ, ամենուն ալ կարծեաց և սկզբունց համաձայն է, ամենուն քով աղագատ մուտք ունի, շարժելով քանի մ'անգամ ամենուն այցելութիւն կուտայ, մանաւանդ աւելի պարտաւորեալն: Յիշեալ վարդապետը բնականաբար Պատրիարքական փոխանորդին ալ թըշ-

(1) Հին ժամանակը Պատրիարքական փոխանորդութիւնը սովորաբար քանաքանակ կը վարէին, եւ իրօք ալ անոնց կը վարէին վարէի՝ քանի որ մանաւանդ անոնցմէն եւ քանակեալ զանազան տեսակի փափուկ պաշտօն ունի Պատրիարքական փոխանորդութիւնը:

տառանմանքն որ հասարակ տարւոյ մէջ 20 օր ունի, իսկ նահանջ տարւոյ մէջ կը լրանայ և կուտանայ 30 օր: Ինչպէս Նախապիս, Եռամիս Հնգամիս և այլն, ունին 3 անգամ օր. և երկամիս, Գումամիս, Վեցամիս, և այլն, ունին 30 անգամ օր: Այս բնական տարեցոյցին կարգադրութեան բոլոր պատճառներն ու բացատրութիւնքը որոնց վերջ կը հրաւիրենք ճշմարիտ բանասիրաց ուշք: Մենք այս կարգադրութիւնը ոչ թէ իւր քրեմային նորեմաւորութիւն մը կը ներկայացնենք մերազնայ հասարակութեան, այլ իւր օգտակար բարեկարգութիւն՝ հիմնեալ ի վերայ բնական գիտութեան և բանաւորութեան, նշատակաւ ազգային ուղիղ տօմար մ'ունենալու որ ցանկալի ըլլայ ամեն աշխարհաց: Չենք կրնար չխոստովանել թէ ասոր ազգ ունի ընդունելութիւնն իղձ մէն է, զոր շատուց ի վեր կը տածենք. չենք կրնար ըսել թէ անտարբեր աչք կը տեսնենք մենք մեր ազգին օտար տօմարներու մէջ մուրացիկ թափառիլ, օտարտի կուոյ ու ձայնից հետեւիլ, ազգ մը մանաւանդ որ զտօմարն ինք հնարած և զնական տարեշափութիւնն ինք հաստատած է զաւարջին: Բայց ասով հանգերձ՝ ամեն տեսակ նորոգութեան մէջ ժամանակին կից նախապաշարմունքն ու այլապէս դժուարութիւնքն ալ անմասօթ չեն մեզի. և եթէ այսօր ազգը չընդունի զայս կարգադրութիւնը, հոգ չէ. իւրաքանչիւր անհատ կրնայ ընդունիլ զայն և իւր առանձին գործողութեանց մէջ ի կիր

նամի ըլլալով, զայն (զնա) արատելու համար անցեալներն ըրած մէկ անշարժ փորձէն ետեւ՝ անցեալ շարժու ուրիշանհեթեթ փորձ մ'ալ կընէ. ինչպէս մեր և ուրիշ լրագրաց, նոյնպէս և Մանլա-ճի խմբագրին գրասենեակն երթեկեկելով, թուղթ մը կը տեսնէ հոն, 1866 թ. եկեղեցական համագումար ժողովոյ վճռագրին պատճէնը, որոյ վրայ Պատրիարքական փոխանորդին ալ դիրք կայ եղբւր բնագրին համաձայն ըլլալուն վկայող: Այն թուղթը կը գողնայ իրօնեան վարդապետն և կը տանի նախ իւր մտերիմ խմբակին յառաջագմանդամաց կըցուցնէ, և անոնց հետ խորհրդակցելէ ետեւ իրօնական ժողովոյ ատենապետ գերա- խորէն Նար Պէյ սրբազանին կըցուցնէ ըսելով թէ անա Պատրիարքարանէն գիրեր, թուղթեր, տեղեկութիւններ կը հաղորդէ Մանլա-ճի, որպէսզի նա ալ վարչութիւնն և մանաւանդ իրօնական ժողովը հարուածէ, և այլն: Երկմանայ զայս՝ Պատրիարքական փոխանորդ Տ. Յ. Մկրեան և կը բողոքէ հրապարակաւ. կիմամանայ նաև Մանլա-ճի խմբագրապետը, և իրօնեանին գողութիւնը Մանլա-ճի միջոցաւ խայտառակելէ ետեւ՝ վարչութեան կը բողոքէ գողցուած թուղթին առ ինքն վերագարծը և գողին պատժուիլը կը պահանջէ: Ինչպիսի անցեալ ուրբաթ օրը խառն ժողովոյ ատենան ելնելով կը քննուի, և Պատրիարքարանի գիւնապետին, գիւնապետին և իշխման արժա. Մատթէոս վարդապետի վկայութեամբ կը հաստատուի թէ 1872 Յունիս ամսոյ մէջ Ներկայ Ս. Պատրիարք Հայրը՝ Ներսէս սրբազան էլ միաժին ուղևորելու ժամանակ, խորմեան սրբազանի հրամանաւ Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն վրայ եկեղեցական համագումար ժողովոյ վճռագրին պատճէնը Պատրիարքարանի արձանագրութեանէն կ'օրինակուի և Տ. Մկրեանի կը ներկայացուի ճշգրտութեան վաւերացումը գրելու, որպէսզի խորմեան սրբազանին ստորագրուելով Ներսէս սրբազանի յանձնուի, որ տանի վեհա- կաթողիկոսին ներկայացնէ: Բայց խորմեան չէ ստորագրել, և թուղթն իւր սեղանին վրայ մնալով՝ վերջապէս գնացեր Մանլա-ճի խմբագրապետին ձեռքն անցեր է:

Գործն այսպէս ստուգուելէ և Տ. Մկրեանի անմեղութիւնն յայտնուելէ ետեւ, երբոր կըստեսինք տեսնել թէ խառն կամ մանաւանդ իրօնական ժողովն ինչ տնօրէնութիւն ըրեր է իրօնեանի դէմ, ընդհակառակն՝ գերբուր զարմանալի փոփոխութիւն մը կը տեսնենք: Ժողովը, որ պարտաւոր էր համար պահանջել իրօնեանէն թէ ինչպէս յանդգներ է ինքը, եկեղեցական և մանաւանդ իրօնական ժողովոյ ան-

առնուլ, ազատ է. իսկ եթէ ոչ ոք ընդունի, այն ալ շատ հոգ չէ, մեր բաղձանքը դարձեալ լցված կը համարինք. քանզի մեր յոյսը մեր ժամանակի մարդոց ընդունելութեանը վրայ չէ բողոքովն, այլ մեր յուսոյ և ըղձի մեծագոյն մասը ապագայ սերունդին վրայ է, որ ժամանակակից կըքերէ ու նախապաշարմունքէ ազատ աւելի լուսաւոր և անկողմնակալ աչք կը դատէ զիւր նախորդաց գործը: Մեր զայս իղձը գոհացուցած է կուգէմպերկ՝ ձայներնիս մեր յաջորդաց հասցնելու միջոցը երաշխաւորելով: Այս մեղի բաւական է:

Մեր անկալութիւնը ազգին մէջ արթնցած յառաջադիմութեան ոգւոյն վրայ է, որ օր քան զօր աւելի տի ծաւալի: Մեր խօսքը թէ ներկայ և թէ յետագայ դարուց մէջ այնպիսեաց է որք յամենայնի ուղղութեան, բարեկարգութեան և բանաւորութեան կուսակից կանգնել կախորժին՝ դուհիկին ծիծաղական երևնալու սնոտի վախն ընդունելով. քան թէ ծիծած նախապաշարմունք ու անիմաստ սովորութեանց տակ գերի Յանոսի և Արեոի ծնրագիր մնալ. այնպիսեաց՝ որք կըսիրեն բանական լուսոյ հետեւիլ յառաջադիմութեամբ քան անբանական դից երկրպագել յատարնկրկմամբ: Այս թիւը տի բաղմանայ. մենք յառաջադիմութեան հաւատ ընծայողներէն ենք:

գամ, խմբագրի մը վստահութիւնը չարաչար գործածել և թուղթ գողնալ անոր գրասենեակէն, խառն ժողովը կըսենք, փոխանակ խնդրոյն ուղղակի առարկայ յանցաւորը դատելու, զայն (զնա) կը թողու, ուրիշ զոհ մը փնտռելու կենէ, և կը գտնէ. — զոհ, — խորմեան սրբազան, — ինչ է եղբւր յանցանքը: — Օրագիրը կըսէ. — Ազգային ստացուածք համարուած այդ իրեն յանձնեալ թուղթերը Մանլա-ճի հաղորդեր է եղեր: Խեղճ խորմեան, մինչև որ գերեզմանին դուռը ձեռք չառնու՝ չափաւ ազատի այդ մարդոց ձեռքէն . . . :

Արդեօք խառն ժողովը կատակ ընել ուղեր է այդ խօսքով թէ իրօք խորմեանը դատաւիտելու ելեր է, որպէսզի իրօնեանը ազատելով՝ անոր դէմ բողոքող և խորմեանի կուսակցութիւն ընող Մանլա-ճի հարուած մը տայ: Ինչ է ըրեր խորմեան. միթէ ազգային ստացուածք եղող տուեալներ Պատրիարքարանէն վերցուցեր տարեր է. ազգային գաղտնի գրութիւն մը հրապարակել կամ հրապարակելու պատճառ եղեր է. — ոչ. այլ աշխարհածանօթ վճռոյ մը պատճէնը, զոր ժամանակին ամեն լրագիրք հրատարակեցին, որոյ անձանագրութիւնները կեցած են Պատրիարքարանի մէջ, և զորս որ և է խմբագիր կրնայ երթալ օրինակել Պատրիարքարանի գիւնապետին, Մանլա-ճի հաղորդեր է եղեր ինքը կամ ուրիշ մէկը:

Ահա այս է ազգային ստացուածք կոչուածը, որ իւր թէ Պատրիարքարանէն յախտակուել կամ գողցուել և ուրիշ վաճառուել է. և այս ծանր ոճին համարը տալու պիտի հարկադրի խորմեան. ինչեւ ողակեզ փոխանակ խառնակայ որպէսզի արդարութիւնը տեղը գտնէ, և Մանլա-ճի ալ սովորի կրօ. ժողովոյ անդամին գողութիւնը հրապարակաւ առակ նշաւակի ընել:

Ստուգիւ ինչ օրերու հասանք, Աստուած իմ, իրօնական ժողովոյ անդամ մը գողութիւն կընէ և կը պաշտպանուի նոյն իսկ իրօնական ժողովէն՝ մարդասպանութեան կասկածի ներքեւ ինչոք, շնութեամբ ամբաստանեալը, գողութեան յանցանքով բռնուողը, որք եթէ աշխարհական ըլլային՝ տէրութեան բանտերուն մէջ պիտի մաշէին, և մեր նախնեաց օրով՝ առաքելաշաւիղ Ս. Հարց օրով՝ եկեղեցական աստիճանէ պիտի զրկուէին կամ երկար տարիներ անապատներու մէջ ապաշխարութեան պիտի ենթարկուէին, ոչ միայն անպատիւ կը մնան, ոչ միայն անպատկառ կը ըլլին ժողովրդեան մէջ, այլեւ՝ եկեղեցւոյ տեսչութեան՝ այն է եկեղեցւոյ և եկեղեցականաց բարեկարգութեան հակելու տեսչական և դատաւորական պաշտօն կը վարեն, կրօնական ժողովոյ մէջ վճիռներ կարձակեն:

Այս գալթակղական տեսարանը որպէս թէ բաւական չէր, այդ անձինք զիրար ալ կամ բաստանեն ու կը խայտառակեն հրապարակաւ: Բարձրաստիճան եկեղեցական մ'ուրիշ բարձրաստիճան եկեղեցական մը կը զրպարտէ իբրեւ զօրաբաղ, կաթողիկոս մ'և վարդապետ մը զիրար կամբաստանեն իբրեւ ստախօս, մին կ'իխտէ, միւսը կը հաստատէ, և երկուքն ալ երգնուլ յանձն կառնուն: Անդին եպիսկոպոս մը ամենայն Հայոց կաթողիկոսը չարաչար կը վատահամ բաւէ. ասդին երկու քահանայք մէկըմէկ կամ բաստանեն և հրապարակը գալթակղութեամբ կը լցնեն. երկու իրօնական թերթ՝ եկեղեցականներէ խմբագրեալ, զիրար կը թշնամանեն, ընդդէմ բնութեան յանցանքով ամբաստանեալ նորատի վարդապետ մ'առաջնորդ կը կարգուի, և այլն և այլն:

Եւ այս ամենէն վերջն ալ, ազգին մէջ գըտնուած պարկեշտ և արժանաւոր եկեղեցականք պատիւ և վարձատրութիւն չեն գտներ, բնդհակառակն կը հալածուին ու կը հարուածին: «Դարանակալ լիցուք արդարոյն զի դժպէսի եղև մեզ. . . »:

Կարծես թէ Պօրճիայից դարն եկեր է Հայոց եկեղեցւոյ գլխուն: Իսկ ժողովուրդն ինչ կըսէ, ինչ կընէ այս անկարգութիւններուն խայտառակութիւնները տեսնելով: Բնականաբար կը գալթակղի, համարումն ու վստահութիւնը կը խրջեն կղերին վրայէն, և հուսկ ուրեմն եւ

կեղեցիկն ու կրօնքէն պաղելով՝ կամ թերա-
հաւատութեան մէջ կը գործի, կամ օտար որ-
տորդներու անջան որս կը լայ :

Հայ կղերին այս ողբալի վիճակն ամեն բարե-
սէր և կրօնասէր Հայոց և մասնաւորապէս ամե-
նապատիւ Ս. Պատրիարք հօր խորին ուշադրու-
թեանն արժանի է : Խիստ վշտալի է այս վիճակն
ամեն զգայուն և եկեղեցասէր Հայու համար :
Ազգու դարման , անյապաղ դարման պէտք է :
Անաչառ արդարութիւն պէտք է հաստատել
այս ազգին մէջ . յանցաւորը պատժել , արդարն
ու առաքինին վարձատրել ու քաջալերել :

Ըստ մեր համոզման , Ս. Պատրիարք հօր ա-
ռաջին ընելու գործն է մայրաքաղաքիս մէջ
թափառող անկար , ստահակ , և բամբասեալ
կրօնաւորներն հեռաւոր վանքերը շրջել , հսկո-
ղութեան և հրահանգի ներքեւ դնել : Կրօնա-
կան ժողովը կազմել առանձին վարք ունե-
ցող ուսեալ , փորձառու , պատկառելի եկեղե-
ցականներէ , որք բարեբաղդաբար կը գտնուին
ազգիս մէջ , թէ և սակաւթիւ , և այդ ժողո-
վին առջեւ անաչառապէս դատել ու պատժել
եկեղեցականաց գայթակղական գործերը . մի-
անգամայն աշարժել և խիստ հսկողութիւն մը
ընել անոնց վրայ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կարողիկոսաց Էջմիածնի , ի Սիմեօնէ մինչեւ
ցնովանքն Լ. ամբ Տեառն 1763—1831 :

ԳՐԵԱԼ

Ի Մեթա Մագիստրոս Մեթեանց Զօրանաց :

Ուրաւալ 306 երեսներէ բաղկացեալ կարեւոր մատ-
եան մըն է , տպեալ ընտիր բոլոր վերայ մաքուր տը-
պագրութեամբ , բարեզան խնամօք արժա . Զարմա-
րայ Մեթեանց (որպէս բարեխիղատակ հեղինակին
Պատմութեան) ի տպարանի իւրում ի Մոսկուա :

Այս պատմական գիրքը՝ որ հետաքննութեան եւ
ուշադրութեան արժանի գանազան տեղեկութիւնս
պարունակէ , պարզ գրաբար գեղեցիկ ոճով շարա-
դրեալ է . հետեւաբար դիւրիմանալի պիտի լինի ամեն
հետաւոր եւ մօտաւոր երկիրներու մէջ գտնուող Հա-
յոց : Ուստի յոսմամբ քի իւրաքանչիւր ազգասեր անձն
պիտի փափաքի մի օրինակ ունենալ ի մատենէս ,
որոյ ի ճակատն կը տեսնուի բազմամուտ եւ բազ-
մարդին հեղինակին պատկառելի կենդանագիրն :

Յիշեալ գիրքն , բաց յայլ կարեւոր գրութեանց , պա-
րունակէ գլխաւորն հրովարտական Ռուսաց կայսե-
րաց՝ Պօղոսի Ա. Աղեքսանդրի Ա. եւ Նիկողայոսի Ա.
գրեալս առ. գանազան կարողիկոսութեան Էջմիածնի .
նմանապէս պարունակէ գաղափարագրական եւ պատ-
մական քննութիւնս ի վերայ Արքային Էջմիածնի , եւ
ծանօթութիւնս գիրաւանց , գլխաւորն եւ գիշխանու-
թեան ծայրագոյն Պատրիարքին Հայոց , որ ի ստոր
Էջմիածնի : Թղթակազմին գին՝ 8 Ֆրանք կամ 2 ար-
ծար ուրբի է :

ՁԱՆԱԶԱՆ ԵՄԻՐԱՐ

Զմիւռնիա , 10 Յունուար :

Քաղաքիս մահմետական ժողովրդեան մէջ
դրամական հանգանակութիւն կը լինի , որով
ոտքի ամաններ և գուլպայ (շորապ) պատրաս-
ելով պիտի յուղարկեն Հերսէկովին զինուորակա-
նաց և մասնաւորապէս իզմիրի բէտիֆներուն :

Այսինքն կը ծանուցանեն թէ նոյն քաղա-
քին միւլթէսարքի վսեմա խառ փաշան յան-
ցելում շարաթու վախճաններ է երկարատեւ հի-
ւանդութեամբ մը , որով վարակեալէր ի բաղ-
մաց հետէ :

Ցաւօք սրտի կը ծանուցանեմք զտարածամ
փախճան յարգոյ պարուն Սարգիս Թէքալըք-
եան , պարկեշտ ու աղնիւ երկրասարդին , որ ի
միջոցի երկից աւուրց առ Աստուած փոխեցաւ
ի մեծ ցաւ իւր ընտանեաց և իւր բարեկամացը :

Երէկուանէ ի վեր օդը յոյժ գեղեցիկ և
արեւափայլ է : Ռէտուրի շերմաշափը ստուերի
ներքեւ 3—4 աստիճան կը շանակէ գրոյն վրայ :

Եղիպտոսէն կը ծանուցանեն թէ բարձրա-
յըրափն վսեմ Շերիֆ փաշային յանձնէր է ար-
տաքին գործոց տեսչութիւնն՝ փոխանակ վսեմա .

Նուպար փաշային որ հրաժարեցաւ :

Մեր վսեմա վալիին հրամանաւ , մեծաշուք
Սալիհ էֆէնտին նախագահ կարգեցաւ Զմիւռ-
նոյ քաղաքապետական (պէլէտիէ) խորհրդոյն
փոխանակ Էվրաղատէ Մէհմէմէտ էֆէնտին :

Մօտերս ի Կ. Պօլիս՝ լրագրաց վերաբերեալ
մեծ ձախորդութիւն մի տեղի ունեցաւ , որուն
վերայ կը յաւելմք :

Մոհա , Միհա , Մահալ և Հայալ զաւեշտական
թերթքն՝ առաջինն վսեմ ամսոյ միոյ և միւս ե-
րեքն վսեմ երկուց ամսոց դադարեցան տպա-
դրական ճեպուղիներն հրամանաւ : Դարձեալ
Լրագիր թերթն միամենայ դադարման դատա-
պարտեցաւ . իսկ Օրագիրն բողոքովն ընշուեցաւ .
Բաց յայսցանէ Լա Թիւրքի և Լը Միստրալ օրա-
գիրք յանդիմանական ազդարարութիւններ ըն-
կալան ի յիշեալ ճեպուղիներէ : Յայտնի է թէ
այս խտուրթեանց պատճառ՝ անխոհեմ և վնա-
սակար հրատարակութիւնքն եղած են :

Ուրախ եմք սակայն իմանալով թէ ի փոխա-
րէն ընշեալ Օրագիրն , նորա մեծա խմբագիր-
Տնօրէնն՝ ազգասիրական շնորհիւ արտաքին գոր-
ծոց պաշտօնատան խորհրդական վսեմ Տատեան
Յարութիւն—Պէլին , յաջողեալ է ՆՈՐԱՅԻՐ ան-
ուամբ թերթ մի հրատարակելու :

Պարսկերէն օրագիր մի՝ Ալթիմի մնուն ,
սկսեալ է հրատարակուիլ ի Կ. Պօլիս , և կը յու-
սացուի թէ յաջողութեամբ պիտի շարունակէ .
քանզի արդէն բաւական բաժանորդք գտեր է :

Կըլենմի թէ Կ. Պօլսոյ մէջ Ս. Պատրիարք
Հայրն , նմանապէս Յունաց և ուրիշ ազգայնու-
թեանց հոգեւոր Հովիւքն զատ զատ ներկայացեր
են բարձրա Մեծ—Եպարդոսէն և իրենց փոխա-
դարձ ժողովրդոց կողմանէ խորին երախտագի-
տութիւն յայտներ են վսեմ նոր բաշխարհու-
թեանցն՝ շնորհեցող վերջին հրովարտակա :

Ըստ առաջարկութեան ամենա Տ. Ներսէս
Ս. Պատրիարք Հօր , գերա Սիմեօն Արքեպիս-
կոպոսն (որ Երուսաղէմայ Պատրիարքական փո-
խանորդ է) Կ. Պօլսոյ պատրիարքական Տեղա-
կալ կարգուեր և արդէն սկսեալ է իրեն յանձ-
նուած այս պաշտօնն վարելու :

Կայսերական հրովարտակա , վսեմա Մագ-
ստատեան Սիմեօն—Պէլին նոր բարեկարգութեանց
գործադիր գերագոյն խորհրդոյն անդամ ան-
ուանեցաւ , փոխանակ մեծաշուք Գույումճեան
Պետրոս էֆէնտին , որ առևտրական դատարա-
նաց ընդհանուր նախագահ կարգեցաւ :

Հերսէքի կուսակալութիւնն՝ փարիզի նախորդ-
դեսպան վսեմա Ալի փաշային յանձնեցաւ , և
այս առթիւ վեղերի ատոմանն շնորհեցաւ նմա :

Յունուարի 8 ամսաթուով Կ. Պօլսէն հա-
եալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ վսեմ (Յա-
կոբ) կոստանդ էֆէնտին փաշայի բարձր աստի-
ճանն շնորհուելով , հասարակաց շինուածոց նա-
խարարութիւնն յանձնուեր է նմա :

Հասարակաց շինուածոց նախորդ տեսուչ
վսեմա Գատրի—Պէլին նոյն նախարարութեան
խորհրդական (միւլթէշար) կարգուեր է :

Ուղղակի տրոց տեսչութեան անդամ մե-
ծաշուք Ռիֆաթ էֆէնտին Զմիւռնոյ մաքսա-
տան տնօրէն կարգուեր է :

Բարձրա Ռիզա փաշան զինուորական զօ-
րութեանց նախարար , և վսեմ Տէվրիշ փաշան
ծովային զօրութեանց նախարար անուանեցան :
Կըհաւատեն թէ Անգղիոյ թագուհւոյն
դահաժառանգ որդին՝ կալէսի իշխանն Հընդ-
կաստանէն մեկնէր է ի Լոնտոն վերադառնալու :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակին գիներն 350—320 զուրուշ են ըստ
տեսակին . իսկ Ատանայինը՝ 310—313 առ կեն-
դինարն : Այս գիներով իւր 1000 հակ բամպակ
վաճառեցաւ :

Աֆիօնն միշտ գիւրաւաճաւ է . և այս շուր-
թու 80 կողովի չափ գնեցաւ , գլխաւորապէս
վսեմ Ամերիկայի , ի գին 145—160 զուրուշի
չէքին ըստ տեսակին :

Պալամուտէն ևս 8000 կենդինարի չափ վա-
ճառեցաւ այս շարթու , 90—110 զուրուշի :

ԾԱՆՈԹՈՒՄ

Պատաստուարիւն անգղիարէն լեզուի :

Միտար Վուլիէմս վոլթէրս անգղիացի վար-
ժապետն իմաց կուտայ հայազգի երկրասարդաց
թէ մասնաւոր դասեր կուտայ՝ անգղիարէն սով-
րել փափաքողաց : Ո՛վ որ կուզէ աւելի տեղե-
կութիւններ ստանալ , պարտի դիմել ի դրամա-
ճառի խանութն՝ որ Յունաց Ալի—Եօրեի եկե-
կեղեցւոյն դիմացն է :

ՀԻՒԱՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԸ



ԳԵՂԱՆՍԻ ՀԱՆՈՒՐԻՒ
ՋԱՆՏԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Մարդոց զբոսն դուրսէն (սօնիթ) շատ յոգնած ըլլալ
սովալի արտ մըն է և ջիւղերուն ամենափոքրիկ շարժումը կամ զը-
գուրթիւնը վշտալի է յոյժ . վսեմ զի ուր գտնուելու է անոր դե-
ղը . Միակ զեղը այս է . քիչ խմելու , գարեջուր , և ուր-
ից ընկելու . և աւելի ազնի կըլայ որ բողոքովն հեռանա տ-
նոցմէ , և ամենին շնոյն . նմանապէս խաչվէ մի խմեր , և ան-
տեղ թէ թէ թէ (այս) գոհ կըլի : Կարելի եղածին չափ մե-
քուր օդ ծծէ ամեն գիշեր իմ դեղահատերէս երեք կամ չորս հա-
կըլէ , շատ միս կեր և համանքէ (սոյս) հեռի կեցիր : Եթե
այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ ի գործ դնելու ըլլա-
միտքը չուտով պիտի հանգստանայ , մարմնը առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնա թէ զբոս շարժումն ունեցար :

ԱՆԿԱՐԻՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մը
թէ կըլլանք չափէն աւելի ջրալից կըլլան կամ բաւական չեն ը-
լլալ , թէ բարձր կամ աւագ երկիւմանց կը հասնին կամ թէ ա-
նոնց մեջցաւոր կը գոյանան մը ջրին համապատասխանած մասը , Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլուէրի դեղահատե-
րը անուշ տպեալ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիով լը-
փել երկիւմանց վարի կողմը անկողին մանկու ժամանակը : Այս
դարմանն անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ , այնինչ ու-
րիշ դեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՄՈՒՄԻ ԱՐԻՈՒՆԸ

Ո՛ր և է դեղ մի չկրնար ստամոքսի զօրութիւնը նորոգել և
աղեկցնել զայն շուտով՝ ինչպէս այս դեղահատերը . որոնք անարի-
ւանութեան կամ վատթար կերակուրէ պատճառաւ բողոք թըթ-
ուութիւնը կըլլան և կը հասնին ի լեարդն (սոյս) : Եւ
ուրիշ գործողութիւնը կը կարգադրեն . ջիւղերու սաստիկ ձգտն
(սօնիթ) դեպքերու մէջ քանչեւիկ ներգործութիւն մի ունի և լըրի
ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԸ (ԴՈՒՄԻՆ) ՀԱՋ ԵՒ ՀԱՐԻՈՒՆԸ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութեանց
ամեն արտեւ աւելի յոյժալի կը պատահի և երբեմն աւելի վտա-
նալոր է : Անոնց գործողութեանց անկարգ ընթացքին ատկերիւ-
շաները կընան միշտ կարգադրուել Հոլլուէրի հոշակաւոր դեղ-
հատից միջոցաւ : Ասոնք չուտով կը դարմանեն արեւուն որ և առ-
ժամանակայ անդաժութիւնը , կըլթեմքն խցուած շնչափն-
րը , կը բարեկանան շնչափողն ու թոքերուն դուրսութեամբ ու կա-
րգութիւն կուտան շնչափողն ու թոքերուն դուրսութեամբ ու կա-
նոնաւորապէս գործելու : Այս դեղահատերը՝ իրենց մաքրողական
զօրութեամբ կը սրեն արեւուն ամեն աղտոգորութիւններն , և որ
եղանակաւ կը զօրացնեն զգրութիւնը (սօնիթ) ընդգէմ ծիւղ-
ակոյի , շնչադրութեան , և ուրիշ թոքային տկարութեանց :

ՏԿԱՐԱՆԵԱԼ ՄԱՐԿԱՆԵՐ ԲԱՆԿԱՆԻՈՒԹԻՒՆԸ

Տկարութեան , թուրութեան և ջրացաւութեան դեպքերու
մէջ , որոնք որ և է բնական կամ դերբական չափազանցութեանց
առջ եկած են , այս դեղահատից պիտի լըն յերգութիւնը ներգործու-
թիւնը մնապէս օգտակար է . քանզի մարտողութիւնը կը վերահա-
տատէ , մարմնոյն ամեն հիւթոց թափումը կը կանոնաւորէ , ջրայն
դուրսութիւնը կը զօրացնէ , հիւանդին միտքը կը յարգարէ և վեր-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հոլլուէրի դեղահատերը ամենէն օգտակար դեղերն են հի-
տեալ հիւանդութեանց համար :

Հիւանդութիւն , Թոքացաւութիւն , Թոքացաւութիւն ,
Միւլթային արտ , Տեստեստութիւն , Ցաւ որովայնի ,
Խիթ (սոնիթ) , Զրգողութիւն , Միւլթային ծիւղութիւն ,
Հարբուղն , Անարողութիւն , Բարբոքում ,
Ծիւղական արտ , Դաւուրն , Ախտ ընդերաց ,
Թանշ (սօնիթ) , Բաւախիւն սրտի , Անկանոնութիւնը կո-
խիլ պարանոցն , Բար կամ խիճ միւլթ-
վ երնոտութիւն , Նոցի , Միւլթային հիւանդ-
ութիւն հիւանդութիւնը Գլխացաւութիւն , Թիւրք ,
Փողացաւ , Ափրոդիտեան արտ , Խցողութիւն :

Գիտել արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն լեզուով
որոցմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ ի տեղե-
կութիւն հիւանդաց , ամեն պարագայից մէջ :

Այս դեղահատերը , որ կըլինուին Հոլլուէրի բժշկին անձա-
կան վերատեսչութեամբ , կը վաճառուին իւր գործարանը ի Լոն-
տոն , Օքսֆորտ կողմէ փողոց թիւ 533 , ի գին 1 և 1/2 անգ-
լիւն , 2 1/2 և 4 1/2 անգլիւն տուփ , ըստ մեծութեան տոյց :

Խմբագիր—տէր լրագրոյ ,
Գ. Լաւա Գ. Պալաւալէան :

Ի ՏԿԱՐԱՆԻ ԱՐԵՎԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ